« Նոր ժամանակի կրթություն » ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտման թեման՝ Գործնական աշխատանքների իրականացումը «Կերպարվեստ » առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգարյան Գեղամ Շվարցի

Ուսումնական հաստատություն՝ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան թիվ 3 ավագ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....3

2.Գործնական աշխատանքի բովանդակությունը.....5

3.Բնանկարի ծագման պատմություն.....11

4.Բնանկարը՝ որպես գործնական աշխատանք,«Կերպարվեստ» առարկայի դասավանդման ընթացքում.....21

5.Եզրակացություն.....26

6. Օգտագործված գրականության ցանկ.....27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝

- Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը.
- Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.
- Անձի ինքնաճանաչմանը,ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը.
- Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը.
- Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

Ուսուցման գործընթացում մեծ նշանակություն ունի սովորողների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորումը: Մանկավարժական գործընթացում զգալի տեղ են գրավում ինքնուրույն աշխատանքի մեթոդները, ինչը բազմիցս ընդգծել են անցյալի հայտնի ուսուցիչները: Կ.Դ.Ուշինսկին պնդում է , որ միայն ինքնուրույն աշխատանքը կարող է պայմաններ ստեղծել սովորողների մտածողության խորը տիրապետման և զարգացման համար, իսկ Պ.Ֆ.Կապտերևն ասել է , որ դպրոցը բարելավելու յուրաքանչյուր նոր քայլ ինքնակրթության սկզբունքների կիրառումն է երեխաների դպրոցական կրթության մեջ:

Ժամանակակից մանկավարժության մեջ ամենատարածված խնդիրներից են սովորողների ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը, հաջողության հասնելու մոտիվացիայի խթանումը: Ինքնուրույն և մոտիվացված սովորող ունենալու պահանջը պայմանավորված է կրթական համակարգի կատարելագործմամբ, սովորողին զարգացող կյանքին նախապատրաստելու անհրաժեշտությամբ;

Կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները էլ ավելի բարձր պահանջներ են առաջադրում սովորողների մտավոր, հոգևոր և կյանքի համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների տիրապետման նկատմամբ: Այս բարեփոխումները և դրանցից բխող պահանջները մեծապես պայմանավորված են նաև սովորողների մոտ մի շարք կարողունակությունների ձևավորմամբ, որոնք անգնահատելի դեր ունեն սովորողների անձի ձևավորման, զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Հետազոտության թեման ՝ բնանկարը որպես գործնական աշխատանք«Կերպարվեստ» առարկայի առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտության արդիականությունը. կրթական համակարգը գնում է նորացման:Բազմաթիվ փոփոխությունների թվում վերանայվում են առաջադրանքների դերը և կատարման ձևերը:Դրանցից մեկն էլ գործնական աշխատանքն է:Կարիք կա դրա նշանակության և իրականացման ձևերի թարմացման , ինչն էլ ապահովում է մեր աշխատանքի արդիականացումը

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել գործնական աշխատանքների դերը կրթական համակարգում ,մասնավորապես դասապրոցեսի ժամանակ,տարբերել դրանց առանձնահատկությունները

Հետազոտության խնդիրներն են՝

, սահմանել գործնական աշխատանքների դերն ու նշանակությունը՝որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ

. ցույց տալ «Կերպարվեստ » առարկայի դասավակդման ընթացքում գործնական աշխատանքների ուսուցողական ու դաստիարակչական նշանակությունը

. բնանկարչությունը և նրա դասավանդման հիմնախնդրի պատմության ուսումնասիրում

. բնանկարչությունը գիտատեսական հիմունքների բացահայտում կերպարվեստի ուսման գործընթացում

. աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների վերլուծում բնանկարչության դասավանդման գործընթացու

. հանրակրթական դպրոցում բնանկարչության դասավանդման մանկավարժական արդյունավետ միջոցների ,ձևատեսությունների ու հնարքների մշակում

Գործնական աշխատանքի բովանդակությունը

Երեխաների մտածողությունը՝հիմնականում ակնառու-պատկերավոր և ակնառու գործնական է: Պետք է այնպես կազմակերպել ուսուցումը, որ այն նպաստի վերացական մտածողության զարգացմանը: Սովորողին պետք է հասկանալի դարձնել տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը: Սովորողների մեջ նման կարողության առկայությունը նրանց իսկ կրթվածության որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս հիմնական շեշտը դնի նաև սովորողների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս: Սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին անվանում են գործնական աշխատանքներ:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովումը ուղղված հմտությունների զարգացմանը:

Գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը պետք է իրականացվեն գործնական աշխատանքների ընթացքում: Գործնական աշխատանքը, որպես մանկավարժական երևույթ, մի կողմից ուսումնական առաջադրանք է, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որը սովորողին տալիս է միանգամայն նոր գիտելիքներ:

Հիմնականում գործնական աշխատանքը նպատակաուղղված է երևակայության ստեղծագործական մտածողության դիտարկման, հարցեր տալու կարողությունների զարգացմանը:Գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է: Սովորողներին պետք է սովորեցնել հետազոտական հետևյալ ձևերին.

- մտածել ինքնուրույն
- հարցնել մեկ ուրիշից
- կարդալ գրքերում
- տեղեկություն ստանալ համացանցից
- հարցնել համապատասխան մասնագետից
- փորձեր կատարել:

Գործնական աշխատանքի կատարման ժամանակ սովորողը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է ստեղծագործական մոտեցում, որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը: Գործնական աշխատանքը ենթադրում է ոչ սդանդարտ մտածողություն, ստեղծագործական մտածողություն, նախաձեռնություն ցուցաբերելու կարողություն և հնարամտություն, ինքնուրույն որոշում կայացնելու, անհրաժեշտ տեղեկատվություն որոնելու պատրաստակամություն:

Գործնական աշխտանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները՝

- ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա նպատակ
- գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին
- գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները
- յուրաքանչյուր սովորող պետք է իմանա կատարման ընթացքը և յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները

- գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում

- գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնի

- գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործողություն ծավալելու կարողությունը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝**վերարտադրողական,** որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը, **մասամբ որոնողական,** երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը, **ստեղծագործական**, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ:

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ էքննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորությունունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

Ձևավորող գնահատում գոյություն ունեն գնահատման 3 փոխկապակցված տեսակներ՝ **հայտորոշիչ, ձևավորող** և **ամփոփիչ:**

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Առանց **հայտորոշման** ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառությանարդյունքների բարձր մակարդակի:

Ամփոփիչ/միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և ուսուցչի՝ և սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ. Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

սովորողի գործուն ընդգրկվածությունը ենթադրում է.

- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,

ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Կերպարավեստ առարկայի շրջանակներում հայտորոշիչ գնահատականը կարելի է իրականացել հետևյալ կերպ. դիտարկենք բնանկար թեմայի հայտորոշիչ գնահատումը:Կարելի է աշակերտներին հանձնարարել իրենց պատկերացմամբ բացատրել բնանկար բառը և նկարել ,իրենց նկարի հիման վրա ցույց տալ ,թէ որոնք են բնանկարի հիմնական բաղադրիչները ,բացատրել որոնք չեն հանդիսանում բնանկարի բաղադրիչ:Ձևավորող գնահատում կարելի է իրականացնել խմբային աշխատանքներով ,որոնք էլ հիմք կարող են լինել գործնական ածխատանքի համար.Օրինակ՝ կարող ենք նշել թեմայի ամփոփման դասեր և սովորողներին հանձնարարել խումբ-խումբ ներկայացնել բնակարներ:Ամփոփիչ գնահատման ժամանակ կարելի է կազմակերպել աշխատանքների ցուցադրում և քննարկում ,խոսել կառուցվածքից, հեռանկարից ,գույնից ,ծավալից,կոմպոզիցիայից:

Կերպարվեստ առարկայի երկար տարիների մանկավարժական փորձից ելնելով ՝ կարելի է առանձնացնել արդյունավ 3 մեթոդներ՝

Ձննական մեթոդ

Ձննական են համարվում այն մեթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագաներից և ուսուցման տեխնիկական միջոցներից: Ձննականությունը հնարավորություն է ընձեռում օբյեկտներին, առարկաներին ծանոթանալ բնական վիճակում և սիմվոլների միջոցով:

«Իլյուստրացիա» - այս մեթոդը խնդիր է դնում կամ պահանջում է ուսուցման գործընթացում ուսումնական նյութը հաղորդելիս կիրառել դիտազննական պարագաներ՝ քարտեզներ, պաստառներ, գծագրեր, նկարներ, դիմանկարներ և այլն: Դրանց ցույց տալն ու վերլուծությունը կոչվում է իլյուստրացիա: Ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ պատմելը, զրույցը, բացատրությունը, դասախոսությունը զուգակցվում են իլյուստրացիային, այսինքն՝ ցուցադրմանը:

Խոսքային մեթոդներ

«Պատմել» - այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում: Պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում ամփոփումով: Շարադրվում կամ պատմվում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ խստագույնս պահպանելով սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքը: Պատմելու ընթացքում վարպետորեն առանձնացվում է նյութի գլխավոր տարրերը: Գիտելիքները հիմնավորվում է օրինակներով, գիտական փաստերով, համապատասխան իլյուստրացիաներով և դեմոնստրացիաներով: Այս մեթոդի կիրառման ժամանակ գործադրվում է մի շարք հնարներ, օրինակ՝ «համեմատության», «համադրության», «սովորողների ուշադրության ակտիվացման» և այլն: Այս մեթոդը հիմնականում կիրառվում է դպրոցական ուսուցման ընթացքում:

Գործնական մեթոդներ

Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Վարժություններն իրենց բնույթով բաժանվում են բանավոր, գրավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային վարժությունների, գործնական աշխատանքների : Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք, որոնք փոխկապակցվում են՝ կանխանշած նպատակին հասնելու համար: Սրանք կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի բոլոր փուլերում: Բոլոր տեսակի վարժությունների բնույթը և մեթոդիկան կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից: Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ.

1. առաջադրանքի պլանավորում,
2. առաջադրանքի կատարում,
3. կատարման ընթացքի խթանում,

4. վերահսկողություն,
5. կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում:

Բնանկարի ծագման պատմություն

Ընդհանուր բնութագիր: Բնանկար (ֆրանսերեն՝ paysage, pays - երկիր, տեղանք), տեսարան կամ որևէ տեղանքի պատկեր է, գլխավորապես գեղանկարչության և գրաֆիկայի մեջ, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործություն, որի պատկերման առարկան բնությունն է:Բացօթյա նկարչությունը հաճախ անվանում են **Պլեներ** (ֆր.՝ Pleinair, բառացի՝ բաց օդ, բացօթյա)գեղանկարչության մեջ տերմին, որով նշվում է արևի լույսի և օդի ազդեցությամբ պայմանավորված գունային փոփոխությունների ողջ հարստության վերարտադրումը նկարում:

Հաճախ պատկերվում են նաև քաղաքի, ճարտարապետական համալիրների, ծովերի տեսարաններ:Շատ անգամ որպես ֆոն է ծառայել հարթաքանդակում, գեղանկարում և գրաֆիկայում: Բնանկարը բնության ձևերի և երևույթների, լույսի, օդի, տարածության գեղարվեստական արտացոլումն է՝ պայմանավորված հեղինակի աշխարհայացքով, մտքերով և զգացմունքով: Բնանկարը կերպարվեստի ինքնուրույն ժանր է, ինչպես նաև կարևոր դեր ունի պատմական և ժանրային նկարներում: Բնապատկերային գեղանկարչությունը բազմադարյան պատմություն ունի:

Բնանկարի որոշ տարրեր սկզբնավորվել են դեռևս Հին աշխարհի արվեստում, բնապատկերային գեղանկարչության սկզբնավորումում կարելի է առանձնացնել նաև, հին հունական , հելլենիստական, հռոմեական, բյուզանդական գեղանկարչությունը, արվեստի այդ ժանրն ինքնուրույն զարգացել է նաև Չինաստանի Տան և Սուն շրջաններում և Ճապոնիայում : Դարերի ընթացքում խնդիրները բնականաբար փոխվել են, որի արդյունքում կայացել է բնապատկերային բնանկարչությունը: Եվրոպայում բնանկարը՝ որպես ավարտուն ժանր, վերջնականապես ձևավորվել է XVII դարում:

Ռեալիստական բնանկարի որոշ տարրեր ի հայտ են եկել դեռևս Վաղ Վերածննդի և Վերածննդի գեղանկարիչների գործերում:

Ալբրեխտ Դյուրեր

Վերածննդի դարաշրջանի նկարիչներն իրենց նկարներում հաճախ ներառել են բնապատկերներ; Ավելի ուշ որոշ նկարիչներ ամբողջությամբ նվիրվում են այդ ժանրին: Տեղանքի պարզ նշանակության և միայն ֆոն հանդիսանալուց բացի, բնանկարը դարձավ գեղանկարչական ստեղծագործության գլխավոր գործոն՝ ձեռք բերելով հստակություն և որոշակիություն, բովանդակելով դարաշրջանի աշխարհայացքի փոփոխությունը:

Լեոնարդո դա Վինչի

Բնանկարի զարգացման շրջանը բնորոշվում է նրանով, որ արվեստի ցանկացած ձևում և ժանրում արտահայտվում է մարդու և շրջապատող միջավայրի նկատմամբ եղած վերաբերմունքի ոչ միայն փորձը, այլ նաև մարդը դիտարկվում է որպես բնության մի մասնիկ, նրանում ունեցած իր տեղով ու դերով: Կայացման այս շրջանում և բնանկարի հետագա զարգացումը կախված է նկարչի աշխարհայացքի ձևավորումից և ազգային առանձնահատկություններից:

Բնանկարի գեղանկարչության հաստոցային ձևերի ստեղծումը նպաստում է բնապատկերի՝ որպես ինքնուրույն ժանր, առանձնացմանը: Իտալական գեղանկարչության դպրոցների շարքում 16–րդ դարում մեծ հաջողությունների է հասնում վենետիկյան դպրոցը նոր ժանրի ստեղծման գործում: Ջորջոնեն և նրա հետևորդները մեծ ուշադրություն են դարձնում բնության թեմաներին՝ մեկնաբանելովայն բանաստեղծորեն և փիլիսոփայորեն:

Ջորջոնե

Բնանկարի համար դա բարձրագույն ծաղկունքի շրջան էր: Շատ վարպետներ մասնագիտանում են գեղանկարչության այդ ժանրում: Հոլանդական բնանկարիչները ստեղծում են բնության պատկերներ, որոնք տարբերվում են ժանրային անսովոր լայն ընդգրկումով: Հոլանդացիները հպարտանում են իրենց երկրով մշակված անհամար դաշտերով, ջրանցքներով, անտառներով:

Այնուհետև այս ժանրի ձևավորման մեջ մեծ ներդրում են ունենում **Բարբիզոնյան դպրոցի** (ֆր.՝ École de Barbizon)ներկայացուցիչները

Անունն առաջացել է Ֆոնտենբլոյի անտառում գտնվող Բարբիզոն գյուղի անունից, որտեղ տևական ժամանակ ապրել են Թեոդոր Ռուսոն, Ժան Ֆրանսուա Միլլեն և խմբի այլ ներկայացուցիչներ: Դպրոցի նկարիչները հենվում էին հոլանդացի նկարիչներ Յակոբ վան Ռյոյսդալի,Յան վան Գոյենի և ֆրանսիացի նկարիչներ Նիկոլայ Պուսենի, Կլոդ Լորենի բնանկարների ավանդույթների վրա: Բարբիզոնյան դպրոցի ներկայացուցիչների վրա ազդեցություն են թողել նաև նրանց ժամանակակիցներ Ժան Բատիստ Կամիլ Կորոն, Գյուստավ Կուրբեն,Էժեն Դելակրուան:

Դպրոցի հիմնադիրն ու ոգեշնչողը եղել է Թեոդոր Ռուսո:

Թեոդոր Ռուսո «Ֆոնտենբլոյի անտառը»

19-րդ դարի սկիզբը ֆրանսիական արվեստում նշանավորվել է կլասիցիզմի և ռոմանտիզմի պայքարով: Կլասիցիզմի ներկայացուցիչներ ըբնանկարը հիմնականում դիտարկում էին որպես ֆոն, որտեղ գործում էին դիցաբանական հերոսներ: Դրան հակառակ՝ ռոմանտիկները պատկերում էին ուղղակի գեղեցիկ բնապատկերներ:

Ժյուլ Դյուպրե, «Կաղնիներ Ֆոնտենբլոյում»

Ռուսոյի ստեղծագործական սկզբունքներին առավել մոտ էր կանգնած Դյուպրեն (1811-1889):

Բարբիզոնցիները իրենց հայրենիքի ռեալիստական բնապատկերի կողմնակիցներն էին՝ միաժամանակ այդ ֆոնին պատկերելով աշխատավոր հասարակ մարդկանց: «Այդ հրաշալի բնանկարիչները» ստեղծել են ազգային իրապաշտական բնանկար, որը հսկայական նշանակություն է ունեցել ոչ միայն ֆրանսիական, այլև արվեստի ազգային

ուրիշ դպրոցների վրա: Բարբիզոնցիների առանձնահատկությունը ռեալիստական բնապատկերի ստեղծումն էր՝ իմպրեսիոնիստների համար ուղի հարթելով:

Իմպրեսիոնիզմ (ֆր.՝ Impressionnisme, impression - Տպավորություն), ուղղություն արվեստում ձևավոևվել է XIX դարի վերջին, XX դարի սկզբին: Ծագել է ֆրանսիական գեղանկարչության մեջ, 1860-ական թվականների վերջին 1870-ական թվականների սկզբին ,ուղղության խոշոր ներկայացուցիչներ են էդուարդ Մանեն, էդգար Դեգան, Կլոդ Մոնեն, Կամիլ Պիսսարոն, Օգյուստ Ռենուարը և ուրիշներ:

«Իմպրեսիոնիզմը» որպես տերմին սկսեց օգտագործվել 1874 թվականի ցուցահանդեսից հետո, որտեղ ցուցադրված էր Կլոդ Մոնեի «Տպավորություն: Ծագող արևը» («Impression Soleil levant», 1872, Փարիզ) նկարը:

Կլոդ Մոնե, «Տպավորություն :Ծագող արև»

Ֆրանսիացի վարպետներն իրենց ստեղծագործությունները կապում էին դասական մտածելակերպի հետ՝ ձգտելով բնությունը ներկայացնել, որպես հավերժական, կենսունակ ու շքեղ միջավայր: Դասականության մտածելակերպն իր արտացոլումն է գտել Նիկոլա Պուսսենի և Կլոդ Լորրենի ստեղծագործություններում:

Կլոդ Մոնե

Նկարիչներն ուսումնասիրում էին լուսավորության բնույթը օրվա տարբեր ժամերին, գույնի վրա լույսի ներգործությունը: Նրանք գերադասում էին նկարել ոչ թե արվեստանոցներում, այլ բացօթյա:Բացօթյա նկարչությունը այլ կերպ անվանում են պլեներ, ֆրանսերենից բառացի թարգմանած նշանակում է բաց օդ, բացօթյա:



Վինսենթ վան Գոգ

Հայ կերպարվեստում իմպրեսիոնիստական մոտեցումներով աչքի ընկնող արվեստագետներից են **Եղիշե Թադևոսյանը** և **Խաչատուր Եսայանը** նրանց տեղծագործությունները լի են իմպրեսիոնիստական լույսով ,գույնով, տրամադրությամբ և ընկլամամբ:

Եղիշե Թադևոսյան

«Նկարչի բարձրագույն արժեքը նրա կոլորիտն է», ահա Թադևոսյանի խոսքերը, որոնք լավագույնս ներկայացնում են հենց իր ստեղծագործությունը, ով ներկայանում է որպես գույների, լույսի, տրամադրության, էտյուդի վարպետ, նա առավելագույնս

արտացոլեց իմպրեսիոնիզմի լույսն ու օդայնությունը, թեթևությունն ու կենսուրախ անհոգությունը՝ փայլելով գունային նրբերանգների կիրառման վարպետությամբ:

Իր բնանկարներով Խաչատուր Եսայանն իմպրեսիոնիզմի ուղղության մեջ նոր ոճ և երանգավորում է բերել: Նա հայ կերպարվեստի ասպարեզ է մտել որպես նրբազգաց բնանկարիչ, որպես ինտիմ, կամերային բնույթի բնանկարի լավագույն ներկայացուցիչներից մեկը: Կամիլ Կորոյի պես Եսայանն էլ իր բնանկարները լցնում է անձնական քնարական տրամադրությամբ:

Խաչատուր Եսայան

Բնանկարի սկզբնավորումը հայ արվեստում սերտորեն կապված է մանրանկարչության հետ: Միջնադարում հայ ծաղկողները ոճավորված-պայմանական ձևերով պատկերել են բնությունը՝ որպես Հին և Նոր կտակարանների մանրանկարների ֆոն, միջավայր: Մատենադարանում պահվում են միջնադարյան հիանալի մանրանկարներ, որոնցում բազմազան սյուժեներ ծավալվում են բնապատկերի համապատկերի վրա:

13 -րդ դար,Կիլիկյան դպրոց

Վասպուրականի մանրանկարչության դպրոցը

XV-XVI դարերXVIII դարի 2-րդ կեսից հայ արվեստում սկզբնավորվել է բնության իրական պատկերումը:

Հաստոցային գեղանկարչության զարգացման շնորհիվ հայ արվեստում բնանկարը ձևավորվել է իբրև ավարտուն, ամբողջական և ինքնուրույն ժանր: Այս բնագավառում անգնահատելի է Հովհաննես Այվազովսկու դերը. նրա արվեստի անմիջական ազդեցությամբ են բնանկարներ ստեղծել Մանուկ Մահտեսյանը, Վարդան Մախոխյանը, Գևորգ Բաշինջաղյանը և այլ նկարիչներ:



Հովհաննես Այվազովսկի Գևորգ Բ աշինջաղյան

XIX դարի 2-րդ կեսից բնանկարի զարգացմանը մեծապես նպաստել են Վարդգես Սուրենյանցը, Հմայակ Հակոբյանը, Հմայակ Արծաթպանյանը, Փանոս Թերլեմեզյանը, ապա՝ Մարտիրոս Սարյանը, Եղիշե Թադևոսյանը, Էդգար Շահինը:

Վարդգես Սուրենյանցը

Փանոս Թերլեմեզյան

Արդյունաբերական բնանկարի ժանրը զարգացրել է Գաբրիել Գյուրջյանը:Հայ կերպարվեստում հրաշալի բնանկարներ են ստեղծել Հակոբ Կոջոյանը , Ե. Թադևոսյանը և Սեդրակ Առաքելյանը: Հայրենի բնությունն բազմազան կերպով են ներկայացրել Մարտիրոս Սարյանը, Միեր Աբեղյանը, Մարիամ և Երանուհի Ասլամազյանները, Հովհաննես Զարդարյանը, Արա Բեքարյանը և ուրիշներ: Հայկական բնաշխարհը նորովի են ընկալել XX դարի 2-րդ կեսի նկարիչներ Մինաս Ավետիսյանը, Հակոբ Հակոբյանը, Քնարիկ Վարդանյանը, Վանիկ Շարամբեյանը, Նիկոլայ Քոթանջյանը, Սեյրան Խաթլամաջյանը և ուրիշներ:



Միեր Աբեղյան



Մինաս Ավետիսյան



Մարտիրոս Սարյան

Իրապաշտական արվեստը հիմնվում է բնօրինակից նկարչության վրա: Այն իրապաշտական ստեղծագործական գրագիտության հիմքն է: Ըստ Չեստյակովի՝ իսկական արվեստը «միշտ բնության աշակերտն է»:

Բնանկարը որպես գործնական աշխատանք «Կերպարվեստ» առարկայի դասավանդման ընթացքում :

Բնությունը գեղագիտական դաստիարակության մի մասն է և մարդու գեղագիտական ճաշակի մեծագույն դաստիարակը: Մարդը բնության մի մասնիկնէ, և այստեղից է սկսվում նրա աշխարհը: ԲՆության հետ անմիջական շփմամբ ձևավորվում է ստեղծագործ մարդու կերպարը,ուստի դասերը պետք է կառուցել այնպես որ սաների մեջ արմատավորվի սերն առ բնություն : Այս առումով կարևոր է էքսկուրսիաների և զբոսանքների դերը, որոնք ոչ միայն նպաստում են աշակերտների մտավոր զարգացմանը, այլև հարստացնում են նրանց ճանաչողական գործունեությունը, սեփական փորձը և երևակայությունը, մարզում միտքը՝ արթնացնելով հույզեր և հաճելի զգացումներ: Այդ կերպ ձևավորվում է գեղագիտական վերաբերմունք բնության և շրջակա աշխարհի հանդեպ:

Իվան Իվանովիչ Շիշկին

Հենվելով մեր մանկավարժական փորձի վրա՝ կարող ենք պնդել, որ սովորողները ցուցաբերում են առանձնակի ուշադրություն և հետաքրքրություն կերպարվեստի նկատմամբ: Գործնական ու խմբային աշխատանքների ժամանակ վերջիններս ցուցաբերում են ցանկություն՝ ինքնուրույն գործնական առաջադրանքներ կատարելու համար: Վստահ ենք, որ կերպարվեստ առարկայի շրջանակներում բնանկարի ուսումնասիրությունը թույլ կտա, որ սովորողները ձեռք բերեն օժանդակ գիտելիքներ նաև «բնագիտություն» առարկայից:

«Բացօթյա նկարչություն» թեմայով գործնական աշխատանքի արդյունքում կարելի է գրանցել հետևյալ արդյունքները.

• աշխատանքի իրականացումը կօգնի ձևավորել գեղագիտական և աշխատանքային դաստիարակություն

• Սովորողները կիմտանան կոլեկտիվ աշխատանքին

• Սովորողները կմտերմանան ու կհամագործակցեն միմյանց հետ

• Կծանոթանան մշակութային գանձերին

• Սովորողները ձեռք կբերեն համալիր գիտելիքներ ու կարողություններ միջառարկայական կապերի շնորհիվ

Գործնական աշխատանքի մասին տեղեկացվելիս աշակերտները պետք է հստակ պատկերացում ունենան, թե ինչ է պահանջվում իրենցից: Սա աշխատանքի կազմակերպման **նախապատրաստական** փուլն է :

Տարածության մեջ շատ լավ նկատելի են նկարողին մոտ գտնվող առարակայի համեմատական չափերը, ձևը, ծավալը, նյութը, լուսաստվերը, գունային համադրությունը և այլն: Հեռանալով առարկայից՝ համապատաս անաբար այդ որակները հետզհետե սկսում են կրել փոփոխություններ և վերջապես դառնում են աննշմարելի: Այս երևույթը բնորոշվում է օդային հեռանկարում:

Ի.Լևիտան

Հեռանկար ստեղծող գծերի հատման կետը գտնվում է հորիզոնի գծի վրա, իսկ հորիզոնի գիծը միշտ գտնվում է մեր տեսողության մակարդակի վրա: Կերպարվեստում հեռանկար ստանում են գծերի և գույների միջոցով: Բացօթյա նկարչության մեջ առաջին

պլանը ավելի պարզ է երևում ,լուսավորված մասերը ավելի տաք են ,իսկ ստվերները՝ սառը: Իսկ արվեստանոցում `հակառակը:

Տեսողության վրա ազդեցություն է թողնում օդի շերտը:

Օդային միջավայրի ազդեցությունից առարկաները կորցնում են իրենց հստակությունը. ինչքան առարկան հեռու է մեզանից, այնքան օդի ազդեցությունն ավելի շատ է նրա վրա:

Ալֆրեդ Սիսլեյ, Ծով սյուր Լուեն

Գեղանկարում գունային հեռանկարն ունի կարևոր նշանակություն, պատկերվող առարկային հեռավորություն հաղորդելու համար:Առարկաները, հատկապես նրանք, որոնք , հեռվում են ,ունեն մուգ գույն, թվում են երկնագույն, մանուշակագույն:

Պ. Բրեյգել

Հեռանալուն համապատասխան միայն առարկայի գույնը չէ, որ փոխվում է: Մեծ հեռավորությունում, առարկայի ծավալը, մասերը, մակերևույթականությունը և նյութականությունը դառնում են քիչ նյութական: Հեռանալուն համապատասխան մուգ առակաները ավելի լուսավոր են դիտվում ,իսկ լույս առարկաները `մթնած,որովհոտև կորցնում են գույնի ուժը: Այդ բան շատ լավ նկատելի է լեռներում:

Մարտիրոս Սարյան

. Յուրաքանչյուր ստեղծագործության մեջ անհրաժեշտ է ունենալ կոմպոզիցիայի կենտրոն

. Ուշադրություն դարձնել հորիզոնի գծի բարձրության ընտրությանը

. Հետաքրքիր բնանկարներ ստանալու համար անհրաժեշտ է ընտրել գեղեցիկ տեսարան գույների և երանգների ճիշտ հարաբերությամբ ստանա օդային հեռանկար

. բնանկարները էլ ավելի հետաքրքիր դարձնելու համար ճիշտ օգտագործել լույսի և ստվերի ,տաք և սառը գույների հարաբերությունները

. Իմաստային կենտրոնները տեղավորել նկարի աչքի ընկնող հատվածում ,կառուցել ճշգչիտ գծային հեռանկար, ինչն էլ նկարին խորություն կհաղորդի:

Գևորգ Բաշինջաղյա

Գործնական աշխատանքի կատարման ընթացքում `**հիմնական** փուլում, ուսուցչի նրբանկատ հսկողությամբ կատարվում է գործնական աշխատանքը,ստեղծագործական գործընթացը ընթանում է անկաշկանդ մթնոլորտում: Պլեներային աշխատանքները էլ ավելի հետաքրքիր և սիրված են լինում ,երբ բացօթյա նկարչությունը կատարվում է պատմամշակութային վայրերում ,այս ընթացքում երեխաները ծանոթանում են հայրենի մշակութային ժառանգությանը:

Աշխատանքների ավարտելուց հետո կատարվում է աշխատանքների դիտում, քննարկում և **ամփոփում:**

Նախագծային բնույթի գործնական աշխատանքների ժամանակ աշակերտը պետք է, որքան հնարավոր է, ինքնուրույն աշխատանքի մփորձ ձեռք բերի: Բայց, եթե նա միայնակ թողնված է խնդրի հետ՝ առանց որևէ օգնության, կամ, եթե այդ օգնությունը անբավարար է, ապա դա կարող է ոչ մի օգուտ չտալ նրան: Եթե ուսուցչի օգնությունը չափից ավելի է, ապա ոչինչ չի մնա աշակերտին անելու: Ուսուցիչը պետք է օգնի, բայց ոչ չափազանց շատ և ոչ չափազանց քիչ: Եթե անգամ աշակերտի ուժերից վեր է կատարել ավելին, ապա ուսուցիչը ծայրահեղ դեպքում պետք է ստեղծի ինքնուրույն աշխատանքի պատրանք: Նշանակում է՝ ուսուցչի օգնությունը պետք է լինի զգույշ և չափավոր: Կրթության բարեփոխումների ներկա փուլում շատ կարևոր է սովորողների մեջ ինչպես ինքնուրույն նախաձեռնությունը,այնպես էլ ստեղծագործական ունակություններ զարգացնելը:

Եզրակացություն

Երեխայի գեղարվեստական գործունեության մեջ էական տեղ ունի գեղարվեստական դաստիարակությունը:Գեղարվեստական գործունեությունը նպաստում է երեխաների տարբեր կարողունակությունների դրսևորմանը, հղկմանը, մի շարք նոր հմտությունների ձեռքբերմանը ,մտածողության ձևավորմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը, գեղարվեստական ճաշակի զարգացմանը,ինքնադրսևորմանը, ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ:Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձի ձևավորման կարևորագույն գործոն է:

Կատարված հետազոտական աշխատանքը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզարակացությունների:

. Կատարվող արդյունավետ գործունեության համար ահրաժեշտ է տեղյակ լինել բնանկարի դասավանդման մեթոդներին և զարգացման պատմաժամանակագրությանը:

. Տիրապետի բնանկարի գեղարվեստական արտահայտչամիջոցներին և կատարման տեխնիկային:

. Կարողանա տիրապետի «Հեռանկար» առարկայի տարրական գիտելիքներին:

Գործնական աշխատանքների ուսուցումը կյանքին կապող լավագույն միջոց է:Գործնական աշխատանքների օգնությամբ գործողությունները վերացական ձևերի մակարդակից փոխադրվում են պատկերային ընկալումների մակարդակ՝ միաժամանակ ստանալով հստակ ձևակերպումներ: Ձևավորող գնահատումը պետք է ընկալվի մանկավարժների և սովորողների կողմից և ապահովվի սովորողների գործուն մասնակցությունը սեփական ուսումնառությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1.Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթությանպետական չափորոշիչ. – Եր., «Անտարես», 2004:
2.Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան,2005:
3.https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html

4,Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Ե., 1958:

5 ,Լ. Ներսիսյան «Բնանկար» 2011

6.Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք 1-2, Ե., 1971– 75:
7.https://editprint.am/studentsdata/%D4%BC%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB%D5%B6%D5%A5%20%D4%B1%D
8.5%BC%D5%A1%D6%84%D5%A5%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6.pdf
https://goris3.schoolsite.am//wpcontent/uploads/sites/217/2018/03/%d4%ba%d5%a1%d5%bd%d5%b4%d5%a5%d5%b6%d5%a1-
9.https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ հանրակրթության մասին օրենք: •https://escs.am/files/files/2020-07-15/abb6c78e3b3b8b5f8ca3922b1e161f7a.pdf
10.Կերպարվեստ առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ եվ ծրագիր: • Ա.
11.Շագաֆյան Նախագծային ուսուցում, (Կրթություն ամենուր և բոլորին):